

Հարցազուցավարի մասնագիտական էթիկայի կոդեքս

Հիմնական սկզբունքներ

Ստորև բերված հիմնական սկզբունքները գրուցավարի/խմբավարի կողմից իր մասնագիտական գործունեության ընթացքում պետք է դիտարկվեն որպես էթիկական վարքի չափանիշ:

I. Հարգանք մարդու իրավունքների, նրա արժանապատվության ու անհատականության նկատմամբ

Հարցազուցավարը/խմբավարը պարտավոր է հարգել յուրաքանչյուրի իրավունքները, արժանապատվությունն ու անհատականությունը: Մասնագիտական գործունեության ընթացքում նա պարտավոր է զերծ մնալ մարդկանց հանդեպ նախապաշարմունքներից, անհանդուրժողականության և խտրականության ցանկացած դրսևորումից՝ անկախ մադու սեռից, տարիքից, էթնիկ պատկանելությունից, ռասայից, ազգային ծագման, լեզվի, կրոնի, առողջական և կամ ընտանեկան կարգավիճակից:

II. Մասնագիտական կոմպետենտություն/իրազեկություն

Հարցազուցավարը/խմբավարը աշխատանքի ընթացքում պարտավոր է ապահովել կոմպետենտության/իրազեկության բարձր մակարդակ: Պետք է ընդունի, որ իր մասնագիտական ունակությունները կարող են սահմանափակ լինել, և պատասխանատվություն ստանձնի միայն այն ժամանակ, երբ վստահ է, որ ունի բավարար կրթություն, ունակություն և փորձ:

III. Ազնվություն

Մասնագիտական գործունեության ընթացքում հարցազուցավարը/խմբավարը պարտավոր է գործել ազնիվ, արդար՝ միաժամանակ հարգելով միմյանց և մասնագիտական գործունեության մեջ ներգրավված այլ մարդկանց իրավունքները: Նա պարտավոր է կառուցել մյուսների հետ հարաբերությունները միմյանց հանդեպ վստահության հիման վրա և ոչ մի դեպքում գիտակցաբար չապակողմնորոշել կամ կեղծ պնդմամբ հանդես չգալ:

IV. Մասնագիտական պատասխանատվություն

Հարցազուցավարը/խմբավարը պարտավոր է հետևել ամենաբարձր մասնագիտական նորմերին և իր աշխատանքի համար պատասխանատվություն կրել:

V. Սոցիալական պատասխանատվություն

Հարցազուցավարը/խմբավարը պարտավոր է հասկանալ, որ կրում է մասնագիտական պատասխանատվություն այն հասարակության առջև, որտեղ ապրում և աշխատում է: Նա պարտավոր է մատուցել իր գիտելիքները և ունակությունները հանրությանը՝ ի բարօրություն հասարակության: Հետազոտություններ իրականացնելիս Հարցազուցավարը/խմբավարը պետք է փորձի զարգացնել սոցիոլոգիան որպես գիտություն և օգուտ բերել հանրությանը:

Էթիկական նորմեր

1. Իր մասնագիտական գործունեության ընթացքում անկախ զանազան հանգամանքներից, հարցազուցավարը/խմբավարը երբեք գիտակցաբար չի խեղաթյուրում իրականությունը:

2. Աշխատանքի ընդունվելիս հարցազուցավարը/խմբավարը գործատուին է ներկայացնում ճշգրիտ և լիարժեք տեղեկատվություն իր մասնագիտացման և աշխատանքային փորձի մասին, ցուցաբերում է գիտական ազնվություն և կռռեկտություն սեփական հետազոտության գնահատման գործում՝ հստակ ընդունելով և հղումներ անելով, մեթոդաբանության, կազմակերպչական աշխատանքների և հետազոտության արդյունքների մեջ գործընկերների և աշխատակիցների նախորդ ներդրումը:

3. Հարցազրուցավարը/խմբավարը ձեռնպահ է մնում որևէ գործողություն իրականացնելիս, եթե իր անձնական հետաքրքրությունները և այլ կողմնակի ազդեցությունները խոչընդոտում են նրա մասնագիտական աշխատանքին:

4. Առաջնորդվելով իրականության բացահայտման գաղափարով, հարցազրուցավարը/խմբավարը հատուկ ուշադրություն է դարձնում տեղեկատվության հավաստիությանն ու վստահելիությանը, ինչպես նաև այդ տեղեկատվության հիման վրա արված եզրակացություններին և առաջարկներին:

5. Հարցազրուցավարը/խմբավարը միջոցներ է ձեռնարկում հետազոտության մասնակիցների և հետազոտության մեջ ընդգրկված այլ անձանց իրավունքների և բարօրության պաշտպանության համար:

6. Հարցազրուցավարը/խմբավարը պատասխանատու է հետազոտության էթիկական կողմի ապահովման համար, ոչ միայն իր, այլև անձանց համար, ում նա ղեկավարում է:

7. Հարցազրուցավարը/խմբավարը թույլ չի տալիս այնպիսի մեթոդների և ընթացակարգերի կիրառում, որոնք խախտում են ռեսպոնդենտի արժանապատվությունը կամ հետաքրքրությունները:

8. Հարցազրուցավարը/խմբավարը տեղեկացնում է մասնակիցներին հետազոտության բնույթի մասին, ուշադրություն հրավիրելով այն հանգամանքին, որ իրենց մասնակցությունը կամավոր է և ցանկացած պահին կարող է ընդհատվել հարցվողի ցանկությամբ: Հետազոտություն իրականացնող հարցազրուցավարը/խմբավարը պետք է ստանա հարցվողի՝ հետազոտությանը մասնակցելու համաձայնությունը:

9. Հարցազրուցավարը/խմբավարը տեղեկացնում է մասնակիցներին կարևոր գործոնների մասին, որոնք կարող են ազդել հետազոտությանը մասնակցելու ցանկության վրա, նա բացատրում է հետազոտության բնույթը և պատասխանում է մասնակիցների հարցերին:

10. Հարցազրուցավարը/խմբավարը հետևում է բոլոր այն պարտավորություններին, որ վերցրել է իր վրա հետազոտությանը մասնակցելու համաձայնությունը տալուց: Հարցվողի հետ փոխհարաբերություններում սոցիոլոգը խիստ հետևում է հարցվողի տրամադրած տեղեկատվության գաղտնիության երաշխիքի ապահովմանը: Հարցազրուցավարը/խմբավարը պարտավոր է ապահովել անձնական տեղեկատվության գաղտնիությունը: